

Դարձեալ խաւեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. ես եմ լոյս աշխարհի. որ դայ զհետ իմ՝ ի խաւարի մի՝ մնասցէ, այլ ընկալցի զլոյս կենաց:

Յետոյ՝ տաքակաց հատուած մը.
«Զի գիտեմ ուստի եկի եւ յո՛ւ երթամ»:

Դարձեալ խաւեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ:

Ես եմ լոյս աշխարհի: Որ հաւատա յիս՝ ընդ խաւար մի՛ դնասցէ, այլ ընկալցի զլոյս կենաց:

Զի գիտեմ ուստի եկի եւ յո՛ւ երթամ: Բայց դուք ոչ գիտէք ուստի եկի կամ յո՛ւ երթամ:

Անտարակոյս՝ տարբերութիւնները ըստ կամս չէ որ տեղի դտած են: Կարելի է խորհիլ որ Հայ-Հոռոմ մը, բուն Ոսկեդարեան բնագիւղը վերստին համեմատած է յոյն բնագիւղին հետ, եւ իր նկատած տարբերութիւնները նշանակած է այս թիւ 99ի դրչութեան մէջ:

Տեսանք որ Աւետարանին ստացող եւ մեկենաս Կողմանները սոյլորական կրօնաւորներ չէին: Անոնցմէ մին մանաւանդ հեղինակած է կամ կազմած ժամակարգութիւն եւ Յայսմաւուրք, ըստ իրենց յարանունութեան, թէեւ հայերէն:

Հաւաքմանս թիւ 99 Աւետարանը, ուրեմն, մեծ կարեւորութիւն կը ստանայ իր պարունակութեամբ եւ յաւելուածներով՝ Հայ-Հոռոմ հոսանքին ուսումնասիրութեան համար: Ասկէ զատ, որքան որ գիտեմ՝ հնագոյն Հայ-Հոռոմ ձեռագիրն է, ներկայիս ծանօթ (1203 թուականէն):

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԽՈՀԵՐ

Կ. Կ. ՊԼԱՏՈՆՈՎԻ

«ՓԱՍՏԵՐ ՈՒ ՄՏՔԵՐ» ՈՒ ՄԱՍԻՆ

Պէտք է ընդունիլ որ Կ. Կ. Պլատոնովը հաճելի գրող է եւ միեւնոյն ատեն հոգեբան, մանաւանդ թէ ճիշտ իբրեւ հոգեբան է որ կը ներկայանայ մեզի՝ իր «Կրօնի Հոգեբանութիւնը» երկասիրութեան մէջ, որ թարգմանուելով հայերէնի՝ վերջերս լոյս տեսած է Երեւան¹:

Գիտական ծանր հանդերձանքէ զերծ, բայց գիտական անառարկելի յաւակնութիւններ ունեցող այս գիրքը սահմանուած է ժողովուրդի լայն խաւերուն, եւ թարգմանիչին իսկ խօսքերով՝ «օգտակար է լինի ոչ միայն պրոպագանդիստներին՝ եւ գիտական աթիւղմի ու հոգեբանութեան պրոբլեմներով հետաքրքրուողներին, այլեւ հաւատացեալ ընթերցողին»²:

Ոճը՝ գիտական մարդու յատուկ հանդարտութեամբ ու վստահութեամբ օժտուած, զերծ է հոգեորական կամ հակահոգեական դարձումներէ: Շուրջ երեքհարիւր էջոց այս գիրքը կը բաղկանայ վեց գլուխներէ. առաջինին մէջ՝ հեղինակը լուսաբանութիւններ կու տայ իր գիրքի մասին, կը թուէ անոր գրգապատճառները, կը խօսի կրօնքի ընդհանուր հոգեբանութեան շուրջ. երկրորդ գլուխը նուիրուած է կրօնքի հոգեբանական արմատներուն ուսումնասիրութեան. երրորդին մէջ՝ կը բնորոշէ հաւատքի հոգեբանութիւնը, իսկ չորրորդին մէջ՝ աղօթքի հոգեբանութիւնը. հինգերորդ գլուխը կը կեդրոնանայ կրօնական մնացուկներու հոգեբանութեան վրայ: Հուսկ՝ վերջին գլուխը, որուն խորագիրն է. «Մի հայեացք դէպի ապագան», ուր հեղինակը՝ իր սրտես հայեացքը ուղղած դէպի ապագան, դէպի համայնավարութեան կատարեալ յաղթանակը, այնտեղ կրօնքի եւ Աստուծոյ համար տեղ չի նշմարեր:

1. Կ. Կ. ՊԼԱՏՈՆՈՎ, Կրօնի Հոգեբանութիւնը (Փաստեր եւ մտքեր), թրգմ. Մ. Վ. ԱՐԻՍՏԱԿԵՍԵԱՆ, Երեւան, «Հայաստան» հրատ. 1974, էջ 293:

2. Անդ, էջ 2:

Դժուար է գրախօսել նման գրութիւն մը, որովհետեւ գրախօսականի մը անձուկ էջերը անգոր պիտի ըլլային տալու ճշգրիտ բնորոշումն ու արժեւորումը մեծղի եւ ընդարձակ այն հարցերուն, որոնցմով լեցուն է յարաբերաբար փոքր այս հատորը: Սկիզբէն պէտք եմ նշել որ այստեղ հարցը բոլորովին իրարու հակոտնեայ երկու դադափարախօսութիւններու մասին է. մէկ կողմէն Մարքսեան «գիտական» անաստուածութիւնը, որուն առանցքը նիւթն է, յարաշարժ նիւթը, որ իր ներքին «տիպիկտիկ» մղումովը կը զարգանայ եւ կը հասնի իր բարձրագոյն արտայայտութիւններուն, այսինքն՝ գիտակցութեան եւ մտածումին. միւս կողմէ՝ աստուածապաշտութիւնը կամ կրօնական հոգեբանութիւնը, որուն առանցքը հոգին է, որ կը կանխէ նիւթը: Մէկ խօսքով՝ կոիւ կը մղուի յանուն հոգիի կամ նիւթի առաջնութեան:

Կ. Պլատոնովը միջոց չի խնայեր փաստելու նիւթին առաջնութիւնը, մանաւանդ թէ՛ նիւթին յաւիտենականութիւնը: Նիւթապաշտութիւն եզրը, սակայն, Մարքսիստ դրութեան մէջ, երկու տարբեր իմաստներ ունի: Առաջին իմաստովը կը գործածուի ճանաչողական հարցի քննութեան մէջ, եւ կը հակադրուի դադափարապաշտութեան, որովհետեւ կ'ընդունի գոյութիւնը առարկայական իրականութեան, անկախաբար մեր միտքէն, որ կը ճանչնայ զայն: Հետեւաբար, ունի առաջնութիւն մը՝ հանդէպ մարդկային միտքին, որ կը ճանչնայ արդէն իսկ գոյութիւն ունեցող նիւթը: Պարզ է որ նիւթապաշտութիւնը, այս առումով, կը նոյնանայ իրապաշտութեան հետ, որ նմանապէս կ'ընդունի՝ թէ առարկայական իրականութիւնը, նիւթական աշխարհը գոյութիւն ունին անկախաբար մեր գիտակցութենէն:

Մինչեւ հոս համաձայն ենք. որովհետեւ եթէ նիւթապաշտութիւն ըսելով ասիկա պէտք ենք հասկնալ, այն ատեն «նիւթապաշտ»ներ էին Արիստոտէլն ու Թոմաս Ագուինացին, Ալպերտ Մեծն ու Ս. Պոնաւենթուրա, եւ առհասարակ բոլոր անոնց արբանեակները... Ամէնքն ալ միեւնոյն բանը կը հաստատեն:

Երկրորդ իմաստ մըն ալ ունի «նիւթապաշտութիւն» եզրը, որ նոյնպէս շատ յստակ է. այսինքն՝ թէ առարկայական իրականութիւնը, նիւթը, գոյութիւն ունի անկախաբար նաեւ Աստուծոյ ալ միտքէն, մէկ խօսքով՝ թէ նիւթը անստեղծ է: Այսպէս, մերժելով ըստեղծագործութիւնը, ուրիշ բան չի մնար ընել՝ եթէ ոչ հռչակել թէ աշխարհս կամ տիեզերքը գոյութիւն ունի ինքնիրեն, անստեղծ է եւ յաւիտենական: Բայց արդեօք կարելի՞ է նման հաւանականութիւն մը: Առանձին պատասխանի կը կարօտի այս հարցումը եւ հոս տեղը չէ քննելու մանրամասնօրէն: Այսքանը միայն ըսենք՝ որ այստեղ այլեւս կը խզուի զօդը մեր միջեւ: Իսկ եթէ ուզենք գիտութիւնը իբրեւ իրաւարար կանչել՝ այս մարդին մէջ, չեմ գիտեր թէ ո՞րքան պիտի

պաշտպանէ մարքսիստ տեսակէտը. յետոյ՝ գիտութիւնը այստեղ իր վճռական խօսքը չունի, թէեւ կրնայ նպաստել պատասխան մը գրտնելու: Գիտութիւնը կը մեկնի փորձառութեան ենթակայ տուեալէն. բայց ճիշտ այդ տուեալին գոյութեան մասին հարց չի դնէր: Չի բաւեր միայն տիեզերքին պարունակութիւնը նկարագրել. մարդկային միտքը ինքնաբերաբար անդրագոյն հարցեր կը շօշափէ, հարցեր՝ որոնք զուտ իմաստասիրական եւ բնազանցական են: Իրականութիւնը իր ամբողջութեան մէջ ճանչնալու անզուսպ փափաքն է որ կը մղէ մեր միտքը՝ հետազօտելու աւելի խորապէս, փորձառութենէն անդին, ուր գիտութիւնը այլեւս ըսելիք չունի: Ատոնք այլեւս գիտութիւնը գերազանցող, իմաստասիրական հարցեր են: Հետեւաբար «գիտական» անաստուածութիւն» կամ «գիտական» աստուածապաշտութիւն» բացատրութիւնները բոլորովին անիմաստ են:

Այս անհրաժեշտ քանի մը ճշտումներէն ետք, անցնինք նկատելու հեղինակին արտայայտած «փաստերն ու միտքերը», որոնք հիմնուած են Մարքսի, Էնգելսի եւ Լենինի հեղինակութիւններուն վրայ:

Հարուածներու առաջին թիրախը կը հանդիսանայ կրօնական ըզզացումը: «Կրօնական զգացմունքը բնածին չէ, այլ մարդու մէջ դաստիարակում է հասարակութեան կողմից»³: Բազմաթիւ օրինակներ կը բերէ իր ըսածը փաստելու համար: Շատ փափաքելի էր որ հեղինակը աւելի գիտական ըլլար այսպիսի փափուկ հարցի մը մէջ...: Տեսնենք սակայն այդ օրինակներուն կշիռը:

Նախադարեան մարդու մասին խօսելով, հեղինակը կը զանազանէ նախակրօնական դարաշրջան մը, երբ մարդիկ կամ ամբողջ առանձին ցեղախումբեր զուրկ են եղած կրօնական պաշտամունքի ամենաչին տարրերէն: Իսկ յայտնաբերուած զանազան առարկաներու մասին՝ կ'ըսէ հետեւեալը. «Հիմք չկայ աստուածներ ու կուռքեր տեսնել այնտեղ՝ ուր փաստօրէն մարդու համար կան միայն արժէքաւոր իրեր»⁴: Բնական է որ անիմաստ պիտի ըլլար փնտռել նախադարեան մարդուն մօտ իմացական եւ բանաւոր այնպիսի առաջացած արտայայտութիւններ, որոնք յատուկ են աւելի ուշ շրջանի եւ կամ ներկայ մարդուն: Բայց անուրանալի է որ անոնց միտքը՝ թէեւ նախական եւ ոչ զարգացած, մերինէն տարբեր չէր, այլ նոյն որակի եւ մակարդակի վրայ էր, ունէր միեւնոյն կարելիութիւնները անդրագոյն զարգացումի, միեւնոյն ամենատարրական եւ բնածին հակումները, որոնք՝ ինչպէս այն ատեն՝ նոյնպէս եւ այսօր ալ ծնունդ կու տան իմացական այլեւայլ արտայայտութիւններուն: Այսպէս, բանականութեան առաջին նշաններէն մէկն էր խօսքը, տրամաբանութիւնը

3. Աճդ, էջ 16:

4. Աճդ, էջ 19:

ներ, նոյնինքն մոգական հրահանգները, որոնք կ'ենթադրեն տրամաբանութիւնը եւ կը հիմնուին անոր վրայ. եւ մենք դիտենք որ շատ մը գիտութիւններ ծագում առած են մոգական հրահանգներէն:

Իմացական այդ արտայայտութիւններուն կարգին՝ կար նաեւ բարոյական խիղճը, իր օրէնքներով, հիմնուած ընդհանուր այն ըսկըգրունքներուն վրայ, որոնք յատուկ են այսօր նաեւ մեզի: Կար, հուսկ, եւ կրօնական զգացումը: Աղգադրական վերջին հետազոտութիւնները վճռական կերպով փաստած են այն իրողութիւնը, որ կրօնական զգացումը կը յայտնուի աշխարհի ամէն կողմը եւ բոլոր մարդկային էակներուն յատուկ է: Մանաւանդ թէ որքան ետ երթանք՝ նախնական ժողովուրդներուն քով, այնքան աւելի յաճախ կը դըտնենք կրօնական շատ բարձր գաղափարներ եւ արտայայտութիւններ: Անոնք մէկ Աստուած կը պաշտէին (զանազան անուններով, ցեղին համաձայն), ինչպէս այսօրուան մեծ կրօնքները, եւ աղօթք ու պաշտամունք կը մատուցանէին անոր:

Կրօնական զգացումը բնածին է մարդուն քով. մարդս իր բնածին կարողութիւններովն ու հակումներովը կրնայ բնականօրէն բարձրանալ Աստուծոյ գաղափարին: Այս զգացումը կամ գաղափարը վախի արդիւնք է, հասարակութեան կողմէ դաստիարակութեամբ ներմուծուած բան մը է, ինչպէս՝ հեղինակին հետ կը հաստատեն նիւթապաշտ-յեղաշրջականները: Անոնց համար մարդս տարբերութիւն չունի կենդանիէն, այլ սկիզբէն կենդանի էր՝ առանց կրօնական գաղափարներու, առանց բարոյական սկզբունքներու եւ առանց ընտանեկան կեանքի: Ըստ հեղինակին, մարդս հետզհետէ անցնելով ոգեպաշտութեան եւ մոգութեան ճամբաներէն, հասած է բազմաստուածութեան, եւ յետոյ միաստուածութեան, վերադառնալու համար հուսկ, արդի մարդուն հետ, անաստուածութեան:

Ուրեմն, պէտք ենք հետեւցնել որ հնաքարի շրջանին՝ մարդը բոլորովին զուրկ էր կրօնական զգացումներէ: Եւ սակայն, մեր ձեռքը հասած հնագիտական տուեալները անառարկելի կերպով կը փաստեն հակառակը. մարդս՝ այդ շրջանին ալ ունէր կրօնական կեանք, հաւատք: Եւ ասիկա վախի արդիւնք չէր. անոնք վախ չունէին մահէն, մանաւանդ թէ՝ անոնց սէրը այնքան խոր եւ անկեղծ էր հանդէպ մեռածներուն, որ կը ջանային՝ կարելիութեան չափով երկարաձգել անոնց բնակութիւնը ընտանիքէն ներս, իրենց հետ տանելով անոնց դանկերը:

Այս բոլորը միայն «արժէքաւոր իրե՞ր» էին մարդուն համար, ինչպէս կը հաստատէ հեղինակը (էջ 19), լոկ «միսիոներ»ներու եւ կամ քանի մը «ճանապարհորդներ»ու յերկրանքներ եւ չափազանցութիւններ էին: Փաստերը չափազանց ակնյայտ են նման ճրի դաստատաններուն դէմ:

Հեղինակը, իր գիրքին 15-18րդ էջերուն մէջ, շարք մը օրինակներով կ'ուզէ ցոյց տալ թէ կրօնական զգացումը բնածին է, այլ դաստիարակութեան արդիւնք. հետեւաբար՝ այդ ուղղութեամբ չդաստիարակուածները երբեք պիտի չկարենան ունենալ այդ զգացումը. եւ իբրեւ օրինակ կը բերէ արջերու քով եւ կամ անտառներու մէջ մեծցած մանուկներու պարագան, որովհետեւ գիտնականները անոնց քով կրօնական զգացումի կամ հոգեբանութեան ոչ մէկ հետք գտած են: Բայց ծանօթ է նաեւ ուրիշ գիտնականներու պարագան, որոնք տարբեր արդիւնքի հասած են. այսպէս, Arnould L. իր *Les âmes en prison* (Poitiers, Oudin) գիրքին մէջ կը յիշատակէ փոքրիկ աղջնակի մը դէպքը, որ առանձին կը յաջողի հասնիլ Գերագոյն էակի մը գաղափարին, ընդունելով Անոր գոյութիւնը: Նմանապէս ծանօթ է Հելէն Քեյլլըրի պարագան. կոյր, համր եւ խուլ այս աղջիկը, տասը տարեկան չկար, երբ՝ հագիւ գրել սորված՝ կը հարցնէր. «Ուսկի՞ց կրնամ եկած ըլլալ. մահէն ետք ո՞ւր պիտի երթամ»...:

Շատ երկար պիտի ըլլար թուել նման օրինակներ, որոնք ցոյց կու տան թէ մարդուս մէջ կան բնածին տուեալներ, որոնք կախում չունին դաստիարակութենէն կամ ընկերային շրջանակէն. կրօնական զգացումը այդ կարգի տուեալներէն մէկն է. Աստուծոյ, կրօնքի, գերբնականի, ու նման այլ գաղափարներ իւրացնելու համար՝ մարդս օժտուած է բնածին յատկութիւններով, կարողութիւններով, հակումներով:

Ասով դաստիարակութեան կարեւորութիւնը է որ կը մերժուի. մարդուն համար անհրաժեշտ է դաստիարակութիւնը: Նորածին երեխան, բնութեան մէկ անբացատրելի խորհուրդով, տիեզերքի ամէնէն աւելի տկար արարածն է. պէտք ունի պաշտպանութեան, խնամքի, ուսուցումի... երկար տարիներ պէտք են մարդ մը կերտելու համար: Մինչդեռ անասունին նորածին պզտիկը շատ աւելի նըպաստաւոր պայմաններու մէջ է. անիկա կը կառավարուի բնազդով միայն. եւ բնազդը կը ժառանգէ ամբողջութեամբ, օրինակ՝ առնենք ծարաւը դոհացնելու բնազդը, որ յատուկ է թէ՛ կենդանիին եւ թէ՛ մարդուն. արդ՝ մինչ անասունը, օրինակ՝ շունը, մէկ ձեւով միայն կրնայ խմել, այսինքն՝ լակելով, մարդս՝ ընդհակառակն՝ հազարու մէկ ձեւեր կրնայ մտածել իր ծարաւը անցընելու համար: Հետեւաբար, անասունին առաւելութիւնը ժամանակաւոր է. կը տեւէ մինչեւ այն պահը՝ երբ մարդս չափահաս կ'ըլլայ եւ իմացականութիւնը գործածելու կարելիութիւնը կ'ունենայ: Ուղիղ դաստիարակութիւնը կ'օգնէ մարդուն, զարգացնելով եւ կատարելագործելով անոր բնածին կարողութիւններն ու հակումները. չի կրնար նոր պատուաստներ դնել՝ արմատացած բնութեան վրայ, այլ կրնայ միայն ուղղել դայն:

Մեր հեղինակին համար, սակայն, կը բաւէ որ Աստուծոյ համար տեղ չըլլայ: Եւ որպէսզի յաջողի իր նպատակին մէջ՝ միջոցներու չի խնայեր. կը մէջբերէ այնպիսի դէպքեր ու անձեր, որոնք կրօնքի ա- նունով՝ կրօնքի դէմ գործած են, կը հիմնուի այնպիսի օրինակներու վրայ՝ ուր յայտնի է ձգտումը ծիծաղելի դարձնելու կրօնքը, քրիս- տոնէութիւնը: Քրիստոնէութիւնն ալ կը նկատէ այնպէս՝ ինչպէս որ դարերու ընթացքին երբեմն ի յայտ եկած է ան, յատկապէս իր եղ- ծուած եւ խեղաթիւրուած ձեւով. մանաւանդ թէ կարծէք դիտում- նաւոր կերպով կը ծանրանայ միայն այդպիսի երեւոյթներու վրայ, յիշելով՝ օրինակի համար՝ «ինկվիզացիան» (հաւատաքննութիւնը) եւ անոր տխրահռչակ խարոյկները, հակադիտական պայքարը, եւ հե- տեւաբար՝ յանկերդ դարձած՝ Կալիլէոսի, Ճորտանոյ Պրունոյի, Կամպանելլայի եւ ուրիշ նմաններու յիշատակումը:

Բայց արդեօք կարելի՞ է քրիստոնէութիւնը դասել միւս կրօնք- ներու կարգին: Չափազանց ակնյայտնի տարբերութիւնը թոյլ չի տար նման մերձեցում մը: Քրիստոնէութիւնը կրօնք մը չէ, այլ կրօնքէն աւելի բարձր, գերազոյն հանդամանք մը ունի: Իրապէս ալ կրօնքը, եթէ այսպէս կարելի է ըսել, մարդէն կը բխի, մարդուն շարժումն է՝ որ կը դիմէ դէպի Աստուած, մարդուն իսկ ստեղծած արժէքներու բարդոյթն է՝ որոնցմով կ'ուզէ իմաստաւորել եւ քաջալերել յուսա- հատ կենցաղն ու մահը. ո՛չ, այս իմաստով քրիստոնէութիւնը կրօնք մը չէ. քրիստոնէական կրօնքին մէջ՝ այլեւս Աստուած է որ նախա- ձեռնութիւնը կ'առնէ, Աստուած է որ կու գայ մեզի, Աստուծոյ շար- ժումն է որ կ'իջնէ դէպի մարդը: Հետեւաբար, արժէքներ են՝ որոնք ծնունդ կ'առնեն Աստուծոյ: Քրիստոնէութեան դիւստոր յատկանիշն է ընդունիլ գոյութիւնը այս արժէքներուն, որոնք տրուած են մար- դուն, արժէքներ՝ որոնց հեղինակը մարդը ինքը չէ, — եւ վկայել անոնց: Այսպէս, մարդս կը դադրի ըլլալ բացարձակ հեղինակը բո- լոր արժէքներուն. կան արժէքներ, որոնք իրեն տրուած են Աստուծո- մէ՝ Քրիստոսի միջոցով:

Պարզ է որ, Կ. Պլատոնովի գիրքին մէջ, քրիստոնէութիւնը այ- լափոխուած կերպարանքով կը ներկայանայ մեզի: Ամենացայտուն փաստերէն մէկը՝ քրիստոնէութիւնը «ծիսային մարդակերութիւն» որակումով բնորոշելն է... (էջ 54):

* * *

Երրորդ գլուխին մէջ հեղինակը կը քննարկէ հաւատքի հոգեբա- նութիւնը: Հաւատքը կրօնքի ամէնէն էական տարրերէն մէկն է, կրօնքի «միսիմում»ը, ինչպէս կ'ըսէ Պլատոնով (էջ 100): Յատկա- պէս կը ծանրանայ կրօնք-հաւատք եւ դիտութիւն իրականութիւննե-

րուն շուրջ: Կարելի՞ է հաշտեցնել հաւատքը դիտութեան հետ. այս է ահաւասիկ դիւստոր հարցը:

Հեղինակին պատասխանը ուրիշ կերպ չի կրնար ըլլալ՝ եթէ ոչ ժխտական: Իրեն համար ոճիւրի համադր է հաւատքն ու դիտութիւնը իրարու հետ հաշտեցնելը, որովհետեւ իմացականութեան եւ հաւատ- քի միջեւ միայն հակասութիւն կայ, ոչ մէկ կապ. «Երբ մարդու դի- տակցութիւնը բախուած է անդիտակցութեան հետ, այդ ժամանակ էլ իմացութիւնը փոխարինում է հաւատով»⁵: Հետեւաբար, կրօնքի հետ միասին, ինքնաբերաբար պէտք է մերժուի նաեւ հաւատքը եւ անոր առարկան՝ գերբնականը, որ «իր հուրեմամբ չի կարող իմա- նալի լինել, եւ որի իրական լինելը չի կարող ապացուցուել, քանի որ այն ծնունդ է հաւատով, ուստի եւ գոյութիւն չունի: Հետեւաբար ասել, գերբնականին հաւատալ, դա նոյնն է, թէ ասել, հաւատալ նը- րան, ինչին կարելի է միայն հաւատալ: Իսկ չէ՞ որ դա ջրի ջուրն է»⁶: Ուրեմն հաւատք եւ դիտութիւն անհրաժեշտ են իրարու հետ. որքան որ դիտութիւնը առաջ երթայ, նոյնքան ալ հաւատքը հետզհետէ կը նուաղի, ըստ Պլատոնովի:

Բայց իրապէս այսքան անհիմն է հաւատքը: Մեր խօսքը մաս- նաւորաբար քրիստոնէական հաւատքի մասին է: Տեսանք թէ նախ- նական ժողովուրդներու մօտ՝ կրօնական զգացումը հիմնուած էր բնածին մղումներու վրայ, թէեւ անոնց դիտական ցած մակարդակը յաճախ անհեթեթ որակումներու կը մղէր զիրենք՝ հանդէպ Աստու- ծոյ, Գերբնականին, զիրենք չըջապատող բնական երեւոյթներուն: Ամէն պարագայի, անուրանալի ճշմարտութիւն է որ մարդս, դարե- րու ընթացքին, լոկ իր բանականութեան թռիչքով, հասած էր ար- դէն Աստուծոյ մը կամ Գերազոյն էակի մը գաղափարին. վկայ՝ հը- նութեան մտքի տիտանները, Պղատոնէն եւ Արիստոտելէն մինչեւ Կիկերոն:

Ի՞նչ պէտք կար, սակայն, հաւատքին, երբ մարդս իր մտքի զօ- րութեամբ գրեթէ կը տեսնէր գերազոյն ոյժի մը ներկայութիւնը տիե- ղերքին մէջ. մարդ իր տեսած բանին չի հաւատար: Ճիշտ հոս է, ա- հաւասիկ, որ կը յայտնուի քրիստոնէական հաւատքի եզականութիւ- նը: Անիկա կը հիմնուի յայտնուած Գերբնականին վրայ. անոր հիմը առարկայական եւ պատմական է: Իսկ յայտնուածին ճշմարտութիւնը երաշխաւորուած է Քրիստոսի կողմէ՝ խօսքով, գործով եւ իր մա- հով ու յարութեամբ: Քրիստոնէական հաւատքի առարկան, հետեւա- բար, Քրիստոս ինքն է, եւ իր յայտնած Աստուածը: Քրիստոսի պատ- մական գոյութիւնը ուրանալը անկարելի է. բայց ընդունիլ նաեւ որ

5. Անդ, էջ 100-101:

6. Հմմտ. Անդ, էջ 103:

Քրիստոս Աստուած էր՝ ա՛յդ է ահաւասիկ դժուարը. բայց ա՛յդ է նաեւ քրիստոնէութեան էութիւնը: Մտքէ վեր է, այո՛, բայց մտքի հակառակ չէ:

Միտքը, սակայն, իր մասը կ'ուզէ. չի բաւականանար կոյր հաւատքով: Հաւատքի եւ բանականութեան միջեւ սերտ դործակցութիւն կայ, «դիւալեկտիկա» մը կայ, զոր եթէ մերժենք՝ անխուսափելի կը դառնայ հաւատքին ծիծաղելիութիւնը: Վճռական դեր մը կը խաղայ միտքը, որքան որ որոշ սլացքէ մը ետք կանգ կ'առնէ իր թռիչքը, տեղի տալով հաւատքին: Ծանր է ասիկա մարդուն համար, բայց միեւնոյն ատեն իր մեծութիւնը կը կազմէ, որովհետեւ հաւատալը աւելի դժուար է քան չհաւատալը...: Աւելի դժուար է, ոչ թէ որովհետեւ «պէտք է կանգնեցնել բանականութեան պոռթկումները», կամ «հաւատալ հակառակ դատողութեանը» (Քիրքէկարտ) եւ կամ «հաւատալ որովհետեւ անհեթեթ է» (Տերտուլիանոս)⁷. այլ որովհետեւ ճիշդ մը կը պահանջէ մեր միտքէն՝ ընդունելու արժէքներ, որոնք իր ստեղծագործութիւնները չեն, այլ Քրիստոսէ տրուած են իրեն, ինչպէս վերեւ նշեցինք արդէն: Այս կէտը հիմնական տարբերութիւնն է քրիստոնէութեան եւ մարքսիզմին միջեւ: Այստեղ գիտական կամ հակագիտական դիրքաւորումներու մասին խօսելը՝ արդէն իսկ հակագիտական է ինքն իր մէջ, որովհետեւ ասոնք բնագիտական հարցեր են, որոնք գիտութեան սահմանափակ վճիռին չեն ենթարկուիր:

Հաւատքը, այո՛, «ափիոն» մըն է, բայց բոլորովին տարբեր՝ թմրեցուցիչներէն եւ ջլատող ու քայքայող ալքոլամոլութենէն, ինչպէս, ընդհակառակն, կ'ուզէ ցոյց տալ հեղինակը (էջ 126): Պատկերաւոր բացատրութեամբ մը կրնանք ըսել որ «բարձի վրայ պառկիլ մը չէ»: Հաւատքը զուրկ չէ դատողութեան հակակշիռէն եւ իմացականութեան զնահատութենէն. այլապէս ո՞ւր կը մնայ վերը յիշուած հաւատքի եւ բանականութեան «դիւալեկտիկան»: Հաւատքը սկիզբէն ամէն ինչ ունենալ մէջ չէ, այլ յաղթանակ մըն է՝ որ տարիներու պայքարով ձեռք կը բերուի ամբողջութեամբ. ամբողջ կեանք մը կ'արժէ: Առանց «քրիզ»ի հաւատք մը, հետեւաբար, յայտնի նըշանը պիտի ըլլար հոգեկան լճացումի եւ ամլութեան:

Պլատոնով ունի նաեւ շարք մը անհեթեթ մեկնութիւններ՝ Աւետարանի մասին (էջ 134-136), որոնց վրայ աւելորդ է ծանրանալ:

Պլատոնով յատկապէս կը ծանրանայ՝ դարերու ընթացքին Եկեղեցւոյ բռնած հակագիտական դիրքին մասին: Ճիշտ է որ Եկեղեցին յաճախ գործելով իբրեւ հովիւ, եւ հետեւաբար՝ իբրեւ պատասխանատու իր ոչխարներուն, կը դնէ օրէնքներ ու արգելքներ՝ իր հօտը

7. Անդ, էջ 104-105:

պաշտպանելու համար նախատեսուած չարիքներէն: Բայց նկատելու է որ՝ շատ անգամ ժամանակաւոր բնոյթ մը ունին այդ արգելքներն ու օրէնքները. չէ՞ք տեսած բնաւ նոր ներկուած նստարան մը. սոփորաբար, վրան դրուած կ'ըլլայ՝ «արդիւրուած է նստիլ»: Բայց, հաղիւ ներկը չորնայ, արգելքը ինքնաբերաբար կը վերցուի:

Պէտք է ընդունիլ, սակայն, որ Եկեղեցին, յատկապէս ԺԵ. եւ ԺԶ. դարերուն՝ երբ արդի գիտութիւնը իր նախաքայլերը կ'ընէր, աւաղելի հետեւանքներ ունեցող դիրք մը բռնեց. այսինքն՝ ժխտական դիրք բռնեց ո՛չ միայն նորածագ գիտութեան ետեւ թաքնուած սխալ վարդապետութիւններուն դէմ, այլ նոյնիսկ այդ գիտութեան դէմ, որ ինքն իր մէջ, մեծղի քայլ ու յաղթանակ մըն էր մարդկութեան համար: Ասոր իբր հետեւանք՝ բացուեցաւ այն վիճը, որ երթալով խորունկցաւ ու լայնցաւ՝ կրօնքին եւ գիտութեան միջեւ: Այսօր, սակայն, ոչ ոք կ'ուզէ այդ սխալը կրկնել: Իսկ «Սեւ Ցանկ»ի կամ «գրաքննութեան» պատմութիւնը գէթ ի՞նքը՝ հեղինակը, պէտք չէր յիշել...:

Ճշմարիտ գիտութիւնը երբեք հակառակ չէ ճշմարիտ կրօնքին ու հաւատքին: Որքան առաջնայ ճշմարիտ գիտութիւնը, այնքան աւելի կը մօտենայ Աստուծոյ. կարծէք Աստուած պահուրտած ըլլար գիտութեան բացած իւրաքանչիւր դրան ետեւ: Ճշմարիտ գիտութիւնը՝ մարդկային ճշմարիտ արժէք մըն է, բայց գերազոյն արժէքը չէ, որովհետեւ գիտութիւնը ամբողջական մարդը չէ, եւ մարդը՝ միակ էակը չէ. միամտութիւն է ամէն բան գիտութենէն սպասելը: Գիտութիւնը կը նմանի խաւարի ովկեանին մէջ նետուած լուսեղէն գունտի մը. որքան աւելի մեծնայ անոր շառաւիղը, այնքան աւելի ընդարձակ մակերես է որ շփումի մէջ կը մտնէ գինք չընկալատող խաւարին հետ: Գիտութիւն մը, որ ասպարէզ կ'իջնէ մարդկային բոլոր հարցերը լուծելու յաւակնութեամբ, արդէն իսկ սխալ է իր մեկնակէտին մէջ: Սահմանափակ է գիտութեան հորիզոնը, եւ ապաւինիլ միայն անոր՝ կը նշանակէ աղքատցնել մարդը, զրկելով զայն էական մեծութիւններէ: Արդեօք սէրը, արուեստի ստեղծագործութիւնը՝ գիտութեա՞ն կը պատկանին. հապա հաւա՞տքը, մարդուն այդ հիմնական ընտրանքը, որ չի հետազօտեր իրերու ինչպէս ըլլալը, այլ վճռականութիւնն է՝ որ իմաստ մը կու տայ մեր կեանքին եւ մեր պատմութեան: Հուսկ, հարկ կա՞յ ըսելու որ յեղափոխական գործունէութիւնն ալ երկրաչափական դրութիւն մը չէ. զուտ տրամաբանական պահանջ մը չէ՝ մարդս յեղափոխական զինուոր մը ընողը, այլ՝ կամքի ներգործութիւն մըն է, ընտրութիւն մըն է, որ մեզ կը մղէ նման քայլերու. ընտրութիւն մը, որ թէեւ ձեւացած փորձառութեան եւ տրամաբանութեան նպաստներովը, սակայն գիտական կերպով չի կրնար ապացուցուիլ:

* * *

Չորրորդ գլուխին մէջ, հեղինակը կը պատկերացնէ աղօթքի հոգեբանութիւնը: Իր բերած մէջբերումներով եւ դիտումնաւոր թուարկած պատմութիւններով, ան մեղի կու տայ աղօթքի լոկ խեղաթիւրուած մէկ կերպարը: Իրեն համար՝ աղօթքը նախապաշարմունք է, շահադիտական նպատակով եղած հոգեկան աղաղակ մը, մեքենաբար եւ սովորութեամբ կրկնուած բանաձեւերու կոյտ: Եւ իբր փաստ այս բոլորին՝ կը մէջբերէ զանազան օրինակներ, այսպէս՝ «Մաքսանենդների աղօթքը» (էջ 179), «Նաւաստու աղօթքը» (էջ 180), «Ռազմական աղօթք» (էջ 182), «Աստուածամօր ձեռնածուն» (էջ 183), բոլորն ալ երեւոյթներ՝ որոնք յաճախակի կը յայտնուին ամբոխային հոգեբանութեան մէջ, բայց երբեք չեն պատկերացներ աղօթքի իսկական էութիւնը:

Աղօթքը անիմաստ կը դառնայ, երբ անոր հիմնական շարժառիթը դադարի նշանակութիւն ունենալէ մարդուն համար, երբ՝ մէկ խօսքով, մերժուի Արարիչի մը եւ նախախնամող Աստուծոյ մը գոյութիւնը: Իրեւ տրամաբանական հետեւանք՝ մարդս ոչ մէկուն պարտական կը զգայ ինքզինքը, քանի որ ինքն է միակ տէրն ու տնօրինողը իր կեանքին, ինքը ինքնաբաւ է այլեւս:

Աղօթքի հոգեբանութիւնը Պլատոնովի կողմէ կը նկատուի անարգանք մը մարդուն համար. անիկա կը հակասէ տրամաբանութեան, ամբողջական մատնելով բանաւոր էակը: Բայց աղօթքի ճշմարիտ հոգեբանութիւնը պայման մը չէ որ մարդս հրաժարի իր իմացական լոյսէն, իր ընկերային եւ անհատական հարցերը լուծելու համար: Աղօթքի հոգեբանութիւնը՝ որ արմատացած է հաւատքին մէջ, նոր լոյս մը կը սփռէ կեանքին եւ պատմութեան վրայ. ի վերջոյ՝ մարդս միայն մարմին չէ, այլ մարմնացած հոգի մըն է, եթէ այսպէս կարելի է կոչել զինքը, եւ այդ հոգին ծարաւ մը ունի՝ որ չի յազեցուիր լոկ գիտութեամբ: Հոգին՝ որուն շնչառութիւնն է աղօթքը, անհունին տենչն ունի:

Մեր նպատակէն դուրս է աղօթքի մասին վերլուծում մը ընելը, որքան որ հեղինակը՝ իր անվերջ մէջբերումներովն ու հապճեպ դատաստաններով անխուսափելիօրէն կը մղէ ընթերցողը նման քայլի մը: Ամէն պարագայի, հաճելի չէ տեսնել որ մարդիկ ներողամիտ ժպիտով մը հեռացնեն իրենց նայուածքը հատորէ մը, որ հրատարակուած է Հայաստանի մէջ եւ հայ ժողովուրդին համար...: Փափաքելի է որ՝ երբ երկրորդ անգամ «Կրօնի Հոգեբանութիւն» մը դրուի կամ թարգմանուի, զգուշանան՝ խեղաթիւրուած մէջբերումներով, կամ աղանդաւորական վիպումներով զայն ծանրաբեռնելէ: Մնահաւատութիւնը եւ կրօնական նախապաշարմունքի զանազան

ձեւերը որեւէ կապ չունին հաւատքի, քրիստոնէութեան եւ կրօնական հոգեբանութեան իսկական էութեան հետ: Քրիստոնէութիւնը հաւասարապէս պայքարած է — մանաւանդ թէ առաջինը ինքը եղած է որ պայքար է շղթայազերծած — եւ կը շարունակէ պայքարիլ այդ աղանդաւորական դիրքաւորումներուն դէմ: Այստեղ հեղինակին նախաձեռնութիւնը բոլորովին աւելորդ է: Կրօնքի մասին այդ եղծուած արտայայտութիւնները ուրիշ բանի չեն ծառայեր՝ եթէ ոչ առիթ տալու հեղինակին որ կրօնքը հռչակէ առհասարակ իբրեւ խարուսիկ եւ մտացածին իրականութիւն մը, եւ նկատէ մարդս իբրեւ «չափանիշը ամէն բանի» եւ «աշխարհի բարձրագոյն արժէքը» (էջ 271-72): Հարկ կ'ա՞յ ըսելու որ իր պատճառաբանութեան հիմերը չափազանց խախուտ են...:

* * *

Ու տակաւին կան բազմաթիւ հարցեր՝ որոնց լուծումը անկարելի է ամփոփել հակիրճ տողերու մէջ. այնքան ընդարձակ է անոնց հորիզոնը, որ իւրաքանչիւրն առանձին ուսումնասիրութեան նիւթ կըրնայ դառնալ:

Իրարու բոլորովին հակոտնեայ երկու զատ աշխարհահայեացքներ են քրիստոնէութիւնն ու մարքսիզմը, որոնք կարծէք մարտահրաւէր կը կարդան իրարու՝ դադափարական ու գործնական գետնի վրայ: Ու Պլատոնովի եզրափակիչ պատգամներէն մէկն է՝ թէ «... անհրաժեշտ է յիշել որ հաւատացեալի եւ անաստուածի աշխարհահայեացքները սկզբունքօրէն տարբեր են: Անաստուածի աշխարհահայեացքը գիտական հետեւողական աշխարհահայեացք է, այն դէպքում, երբ հաւատացեալի աշխարհահայեացքը հակագիտական է, անհետեւողական: Կոմունիզմի կառուցումը ոչ միայն յենուած է գիտական աշխարհահայեացքի վրայ, այլեւ պահանջում է այն: Կրօնական հոգեբանութեան տէր մարդը կարող է լինել երբեմն նոյնիսկ աւելի օգտակար եւ ակտիւ մասնակից, բայց երբեք չի կարող ընթանալ կոմունիզմ կառուցողների աւանդարդում: Նրա հակագիտական աշխարհահայեացքը, եթէ ոչ մէկ, ապա միւս դէպքում նրան անպայման կը դաւաճանի»⁸:

Ասիկա հեղինակին կողմէ կ'անուանուի «լրիւ պարզութիւն», հիմնուած գիտութեան վրայ: Մենք վերը արդէն ըսինք որ գիտութիւնը չի մտնէր այս իմաստասիրական ու զուտ բնազանցական հարցերուն մէջ, որովհետեւ իր «բնազաւառ» չէ: Իրաւունք ունենալու համար չի բաւեր յիշել Կալիլէոսն ու Պրոնոն, Կամպանելլան կամ Լուտերը.

8. Ամդ, էջ 158:

ասոնց դիմաց՝ կշիռքին միևս ասին վրայ՝ կրնանք դնել Ադամ Շաֆը, Կարօտին, Էրնեսթ Պլոխը, Կրամչին, Ճիլասը, Լուքաշը... եւ դեռ ուրիշներ, որոնց կը տրուին «հերետիկոս» կամ «ընդհիլոնիսթ» (վերատեսնող) մակդիրները, որովհետեւ քաջութիւնն ունին դիմադրաւելու մարքսիզմի համար «արդիւլուած» հարցեր, կամ կը համարձակին վերագնահատումներ ընել...:

Դիւրին է գրել եւ հերքել՝ հիմնուելով դադափարի մը աղաւաղուած ձեւերուն վրայ, անտեսելով էականը, կամ նոյնիսկ տեղեակ ալ չըլլալով անոր: Այո՛, դիւրին է այս ձեւով չփոթ ստեղծել միտքերու մէջ: Կ. Պլատոնովի նման կարելի էր գրել նաեւ մարքսիզմի մասին. բայց ատիկա գիտական ձեռնարկ մը պիտի չըլլար, եւ ազատ ու խղճամիտ մարդ մը պիտի չհամարձակէր հարցերը այդ ձեւով նենգափոխել: Իսկ թէ հայ ժողովուրդին համար ո՛րքան օգտակար կրնայ ըլլալ նման հատորի մը թարգմանութիւնը, այդ կը թողում որ ընթերցողները իրենց դատեն:

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ԳԼԸՆՃԵԱՆ

ՅԵՄԱՅԱԿՆԵՐ = ՈԳԵԿՈԶՈՐՄՆԵՐ

ԱՆԱՂՄՈՒԿ ԲԱՆԱՍԵՐԸ

ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆ

(ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Երբ մեր փոքրիկ ազգին մէջ մտաւորականի մը վաստակը կը տօնուի, ինծի կը թուի թէ ընտանեկան հանգէս մը կը սարքուի եւ ամէն հայ ուրախութեամբ կը լեցուի:

Տուն մ'է մեր ազգը, որ դռները լայն կը բանայ եւ կը կանչէ ցեղակից դրացի եւ բարեկամ՝ միասին ուրախանալու համար: Անցան ջարդի եւ տրտմութեան օրերը. քանի մը երկիրներու մէջ բարդաւաճ զաղութներ ունինք, զիրար կը ճանչնանք անունով եւ հասցէով: Մեր մամուլը կու գայ եւ կ'երթայ. հայ լրագիր մը, թերթ մը, դէրք մը կ'առնենք տարին շատ անգամներ. կարծես թէ էջմիածինէն կամ Ս. Ղազարէն, մայր հայրենիքէն մասունք մ'ըլլայ. յուղումով կը կարդանք, Եան կը փնտռենք՝ որ հայ անունին ոսկի սըլաքն է:

1974ին դարձեալ յուղուեցաւ փոքրիկ հայ աշխարհը. մեռաւ Ս. Ղազարի մէջ՝ Հ. Մեսրոպ Ճանաչեան գիտնական վարդապետը, մեռաւ Շահան Շահնուրը: Անդին՝ Պէյրութի մէջ, Մուշեղ Խչիսանի բանաստեղծական եւ դրական փառքի 40 տարիները տօնեցին:

Խորհրդային Հայաստանի մէջ ալ մեծ գիտնական մը կայ, բանասէր Յակոբ Անասեան. անիկա 70 տարեկան եղաւ, իր գրական վաստակին յիսնամեակին մէջն է. յորելեանի տարի է, եւ 1974ը պէտք է փառաւորէ այս դաւակն ալ: Բանաստեղծ կամ վիպասան չէ, բանասէր է. մազաղաթներու, հին թուղթերու, կաշեպատ դիրքերու էջերը կը դարձնէ. կը փնտռէ անուններ, կորսուած պատմութիւն, դարը դարի քով կը բերէ: Կը նմանի աւերակներու մէջ պեղում ընողներու, որոնք հողով թաթաւուն՝ լոյսին կը բերեն թաղուած անցեալները: Մազաղաթներն ալ փոշի ունին, մանաւանդ հիններուն քրտինքն ունին, չունչը՝ որ բուրվառի խունկ չէ, այլ ցեղին անմահութիւնն է: